

կամ դպրոց, ուր հնարաւոր ըլլար այս ժողովրդեան պատանիներէն ոմանք ուսուցանել վարդապետութեամբ, օրինակով եւ խօսքով, լաւագոյնս պիտի ճանչնան իրենց մոլորութիւններն եւ ուրախութեամբ պիտի դառնան ի փարախ Ս. Եկեղեցւոյ. ինչպէս նաեւ անոնց միջոցով հնարաւորութիւն պիտի ըլլայ ապա շահիլ այս կողմի մահմեդականները եւ հեթանոսները. որովհետեւ Հայոց վարդապետները, զորոնք վերագոյն յիշեցինք, շատ յարգուած են Պարսից Շահէն. անոնց ամէնուն գլուխն է Մովսէս վարդապետ, մեր Հայերուն մեծ բարեկամը (gran parziale), որ իմ ձեռքովս ստացաւ Նորին Սրբութեան նամակները: Հաւանօրէն անիկա պիտի ընտրուի Հայոց կաթողիկոս. անիկա այս մասին արդէն ներկայացուցած է խնդրազիր մը Պարսից Թագաւորին, եւ յոյս կայ թէ երբ Շահը Բարելոնը (Բաղդադը) նուաճելէն ետքը վերադառնայ Ասպահան, պիտի կատարուի այս խնդիրը»:

Մովսէս առանձին չէր. իրեն հետ էին իր աշակերտները, յատկապէս Խաչատուր Կեսարացի եւ Արիստակէս վարդապետ. համամիտ համակարծիք էր անոնց Խօջայ Նազար, որուն սիրալիր վերաբերմունքը հանդէպ լատին առաքեալներու, գտած էր ի Հոռոմ հաճութիւն եւ Ս. Ժողովը իւր Նիստերուն մէջ գովութեամբ եւ շնորհակալութեամբ կը յիշէ անոր այս բարեացակամ ընթացքը: